ՀՏԴ : 378(479.25) + 001(479.25) +281.6
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-278

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հղման համար. Զաքարյան, Անուշավան: «Էջմիածնի գիտական ինստիտուտի գործունեությունը»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 278-289. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-278

Հայտնի իրողություն է՝ հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային դարավոր արժեքները պահպանելու և սերունդներին փոխանցելու գործում Ս. Էջմիածնի Մայր Աթոռին կից հիմնարկների՝ տպարանի, ճեմարանի, թանգարանի, մատենադարանի ունեցած խոշոր դերը: Դրանց նոր շունչ և ոգի հաղորդվեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հենց սկզբից: Այդ առումով նշանակալի էր Էջմիածնի գիտական ինստիտուտի հիմնադրումը:

Ստորև ներկայացնում ենք գիտական այդ կենտրոնի հիմնադրման և գործունեության մասին նշանավոր բանասեր, պատմաբան, բառարանագիր, ինստիտուտի գիտնական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի՝ 1922 թ. հունիսի 6-ին գրած ուշագրավ հաղորդումը և ինստիտուտի կանոնադրությունը (տպագրվել են «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի» գիրք Ա. և Բ.-ում, Էջմիածին, 1921–1922, էջ 320-329):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ*

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
(5 փետրուարի 1921 – 1 յունիսի 1922)

Էջմիածնի Գիտական Ինստիտուտի ծագման և հաստատութեան համառօտ պատմութիւնը հետևյալն է.

Երբ Հ.Ս.Խ.Հ. Յեղկոմի 1920 դեկտեմբերի 17-ի դեկրետով պետականացման ենթարկուեցին «բոլոր ազգութեանց կուլտուր-կրթական հիմնարկութիւնները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գոյքով» և փոխանցուեցին «Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի տնօրէնութեան», բնականաբար խնդիր առաջ եկաւ, թէ ի՞նչպէս պէտք է վարուել Էջմիածնի հաստատութիւնների հետ և նոյն թուի դեկտեմբերի 17-ին դեկրետին կից լոյս տեսաւ նաև Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի *հրամանը «Հոգևոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին»: Այդ հրամանի երկրորդ յօդուածի ծանօթութիւնն ասում էր. «Էջմիածնի վանական Ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը՝ որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնար-*

---

* ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 03.02.2022, գրախոսելու օրը՝ 12.03.2021, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

կութիւններ Հայաստանի աշխատաւոր ժողովրդների սեփականութիւն դառնալով, ենթարկւում են անմիջապէս Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատին և վերակազմւում վերջինիս կողմից նշանակուելիք կոմիսարի ղեկավարութեամբ»[*]*:*

Այսպիսով Լուսժողկոմի վրայ պարտականութիւն էր դրւում Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների վերակազմութեան ծրագիրը մշակել և իրականացնել այն կեանքում, և Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանը իրեն յանձնարարուած խնդիրը լուծում է այն մտքով, որ Հ.Ս.Խ.Հ. համար անհրաժեշտ է ունենալ մի գիտական հաստատութիւն, մի «Կուլտուր-պատմական Ինստիտուտ» Էջմիածնում, ուր ամփոփուած են գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեցող բազմաթիւ յիշատակարաններ:

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի այս մտադրութիւնը հաւանութիւն է գտնում Հ.Ս.Խ.Հ. Յեղկոմում և 1921 թ. փետրուարի 5-ին հրատարակւում է դեկրետ Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ հիմնելու մասին:

Այդ դեկրետն ասում է.

1. «Պետականացւում են և Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի անմիջական իրաւասութեան տակ դրւում Հռիփսիմէի վանքը, Զուարթնոց եկեղեցու աւերակները յարակից շինութիւններով և գոյքերով, Էջմիածնի նոր Վեհարան կոչուած շինութիւնը, վանական հիւրանոցը և վանական նոր հանրակացարանը իր կահաւորութեամբ»:

3. «Յանձնարարւում է Լուս. Ժող. Կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացրած ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և հիմնել Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ, *որ նպատակ պիտի ունենայ գիտական հիմքերի վրայ դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրութեան գործը և միաժամանակ մասսաների սեփականութիւն դարձնել հնութեանց այն բոլոր յիշատակարանները, որոնք գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեն և կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժէքների ստեղծագործութեան»:*

Դեկրետի երկրորդ յօդուածը վերաբերում է հանրապետութեան որբանոցների մի մասը Էջմիածնում կենտրոնացնելուն և շէնքերի, գոյքերի և հաստատութիւնների մի մասը այդ նպատակին յատկացնելուն[**]*:*

Այս դեկրետով հիմք է դրւում «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի», որի իրաւասութեանն են յանձնւում մատենադարանը, թանգարանը, տպարանը, վանական հանրակացարանը, Հռիփսիմէի վանքը և Զուարթնոց աւերակները, իսկ դեկրետում յիշատակուած միւս հաստատութիւնները դրւում են Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսարիատի տրամադրութեան ներքոյ՝ որբանոցների համար:

«Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի» առաջին կազմակերպչական նիստում (1921 թ. փետրուարի 2-ին) Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանն *յայտարարում է Ինստիտուտը բացուած և հաղորդում, որ նրա գիտական կոլեգիայի անդամ են նշանակուած ընկ. ընկ.* Լեւոն Սարգսեան, Երուանդ Տէր-Մինասեան, Սենեքերիմ Տէր-Յակոբեան *(միաժամանակ նաև մատենադարանի վարիչ) և* Լեւոն Լիսիցեան *(միաժամանակ նաև թանգարանի վարիչ. մինչև 1921 թ. փետրուարի 1-ը նա Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների կոմիսար էր): Ընկ. Լուսժողկոմի առաջարկութեամբ Լ. Սարգսեան ընտրւում է Նախագահ, իսկ Ե. Տէր-Մինասեան Գիտական Քարտուղար: Լ. Սարգսեան*

[*] Թէ՛ Հայյեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետը եւ թէ՛ Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի նոյն թուի հրամանը տես՝ Դեկրետների եւ Հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, եր. 16:

[**] Տե՛ս Դեկրետների եւ Հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, եր. 107-108:

նշանակում է նաև Ինստիտուտի կոմիսար և ժամանակաւոր վարիչ: Այդ իսկ առաջին ժողովում ընկ. Լուսժողկոմը յանձնարարում է գիտական կոլեգիային շտապ կարգով կազմել Ինստիտուտի կանոնադրութեան նախագիծը և ներկայացնել իրեն ի հաստատութիւն:

Մինչդեռ Ինստիտուտի Գիտական կոլեգիան զբաղուած էր կազմակերպչական աշխատանքով, կազմում էր իր կանոնադրութիւնը, որի նախագիծը պատրաստել յանձնարարել էր գիտնական քարտուղար Ե. Տէր-Մինասեանին, և միջոցներ էր ձեռք առնում կարգաւորելու և ցուցակագրելու արխիւի, մամուլի և ձեռագիրների բաժինները, որոնց համար նոր աշխատակիցներ էին հրաւիրում ընկ. ընկ. Արշակ Բարխուդարեան, Թադէոս Աւդալբէգեան և Մեսրոպ եպիսկոպոս, եկաւ փետրուարի 17-ի յեղաշրջումը և խանգարեց Ինստիտուտում սկսուած կանոնաւոր աշխատանքը և Ինստիտուտի մատենադարանը և աշխատանքի սենեակները կնքուեցին «Հայրենիքի Փրկութեան կոմիտէի» Վաղարշապատի մասնաճիւղի կարգադրութեամբ:

Թէև կենտրոնի (Երևանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի) կարգադրութեամբ որոշուեց պահել Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը, կառավարութեան ներկայացուցիչ նշանակուեց Ն. Աղբալեանը և կնիքները քանդուեցին, սակայն որևէ աշխատանք սկսել անհնար էր, որովհետև Ինստիտուտի գիտական կոլեգիան քայքայուած էր. փետրուարի 18-ի լոյս 19-ի գիշերը բանտից հանուած և սպանուած էր Լ. Լիսիցեանը. կոմիսար և վարիչ Լ. Սարգսեանը ստիպուած էր հեռանալ Էջմիածնից և գտնուում էր Երևանում. Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կարգադրութեամբ պաշտօնից ժամանակաւորապէս հեռացրած յայտարարուեց նաև գիտնական քարտուղար Երուանդ Տէր-Մինասեան, այնպէս որ Ինստիտուտում փաստօրէն մնացել էր միայն մատենադարանի վարիչ Սեն. Տէր-Յակոբեան:

1921 թ. ապրիլի սկզբին Հ.Ս.Խ.Հ. կառավարութեան վերականգնմամբ վերահաստատուեց նաև Ինստիտուտի իրաւասութիւնը իւր օրինական սահմաններում, սակայն բաւական ժամանակ անցաւ, մինչև որ կրկին կազմակերպուեց գիտական կոլեգիան և հնարաւորութիւն ստացաւ գործի ձեռնարկելու: Ինստիտուտի կոմիսար և ժամանակաւոր վարիչ Լ. Սարգսեան ապրիլի 25-ից համարուեց պաշտօնից հեռացած և նրա փոխարէն կոմիսար և գիտական կոլեգիայի նախագահ նշանակուեց 1921 թ. մայիսի 1-ից Կարապետ Մելիք-Օհանջանեան, *որ միայն մայիսի երկրորդ կէսին սկսեց իւր պաշտօնավարութիւնը. իսկ մինչև այն՝ ժամանակ. կոմիսարի և վարիչի պարտականութիւնները կատարում էր Սեն. Տէր-Յակոբեան: Նոյն մայիսի 1-ից կոլեգիայի անդամ և թանգարանի վարիչ նշանակուեց* Գարեգին Յովսեփեան եպիսկոպոսը *և մայիսի 10-ից կոլեգիայի անդամ և տպարանի վարիչ՝* Խաչիկ Սամուէլեանը:

Գիտական կոլեգիայի նոր կազմը իր առաջին նիստն ունեցաւ 1921 թ. մայիսի 25-ին և զբաղուեց գլխաւորապէս հաստատութիւնների դրութեան և գործերի հետ ծանօթանալով և իրաւասութեանց խնդիրներով: Այդ նոյն ժողովում որոշուեց արխիւը կարգաւորելու և ցուցակագրելու համար աշխատակից հրաւիրել Գիւտ ծ. վրդ. Տէր-Ղազարեանին:

1921 թ. մայիսի 26-ին Լուսժողկոմ ընկ. Ա. Յովհաննիսեանը Էջմիածին ժամանելով յատուկ ժողով է հրաւիրում և առաջարկ մտցնում վերակազմել «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը» այն մտքով, որ նա իւր հետազօտութիւնների նիւթ պէտք է դարձնի Հայաստանի ուսումնասիրութիւնը իւր բոլոր կողմերով՝ աշխարհագրական, երկրաբանական, օդերեւութաբանական և այլն, հողի յատկութիւնը, ջրաբաշխական պայմանները, տնտեսութեան զօնաները և այլն և այլն, մի խօսքով այն ամբողջ միջավայրը, ուր զարգանում է կուլտուրան և որի վրայ պէտք է հիմնուի նոր ժողովրդական տնտեսութիւնը: Այդ նպատակն իրագործելու համար Ինստիտուտը ունենալու է բացի Կուլտուր-պատմական բաժնից նաև Բնագիտական բաժին, որի կազմակերպութեան մասին անհրաժեշտ է հոգ տանել ըստ կարելւոյն շուտով: Որոշում է առաջարկն ընդունել և

Ինստիտուտի կանոնադրութիւնը կազմել ի նկատի ունենալով երկու բաժիններն ևս: Այդ օրուանից որոշում է նաև «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտը» վերակոչել «Էջմիածնի Գիտական Ինստիտուտ»:

Այնուհետև Ինստիտուտի գիտական կոլեգիայի ամենագլխաւոր հոգսերից մէկն է դառնում պատշաճ կանոնադրութիւն կազմելը: Մի շարք ժողովներում յունիս և յուլիս ամիսների ընթացքում մանրամասն քննութեան է ենթարկւում գիտական քարտուղարի կազմած կանոնադրութեան նախագիծը, որ և որոշ փոփոխութիւններով ու լրացումներով ընդունուելով՝ առաջարկւում է ընկ. Լուսժողկոմին ի հաստատութիւն 1921 թուի սեպտեմբերին:



1911 թ. կառուցված Էջմիածնի Մատենադարանի շենքը (ճարտարապետ Պ. Զոհրաբյան)

Յիշուած կանոնադրութիւնը նախատեսում էր Ինստիտուտի համար երեք տեսակ աշխատանք, նախ՝ գիտական հրատարակութիւններ՝ «Բնագիրներ և Հետազօտութիւններ» ընդհանուր վերնագրի ներքոյ. երկրորդ՝ Ինստիտուտի անդամների և աշխատակիցների մանր երկասիրութիւնների և յօդուածների հրատարակութիւն՝ «Էջմիածնի Գիտական Ինստիտուտի Բանբեր» պարբերական հանդէսի մէջ և երրորդ՝ գիտական զեկուցումների կազմակերպութիւն, որի նպատակը պէտք է լինէր մի կողմից ընկերներին տեղեակ պահել իւրաքանչիւրի աշխատանքների ընթացքին և միւս կողմից նոր մղումներ տալ և մղումներ ընդունել փոխադարձաբար գիտական աշխատանքի ասպարիզում:

Էջմիածնի Գիտական Ինստիտուտի կոլեգիան ամեն ջանք գործ դրեց, որ կարողանայ գոնէ փոքր չափերով իրականացնել այդ աշխատանքները կեանքի մէջ: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էր, որ նա իր աշխատակիցների կազմը զօրեղացնէր: Դեռ 1921 թ. մայիսի 26-ին ընկ. Լուսժողկոմն յայտնել էր Ինստիտուտին, որ իր կողմից գիտական աշխատակիցներ են հրաւիրուած Առաքել Բաբախանեան (Լէօ) և Հր. Աճառեան: 1921 թ. յուլիսի 6-ին գիտական աշխատակից է ընտրւում և Լուսժողկոմի կողմից հաստատւում Դ. Անանուն, սեպտեմբերի 19-ին՝ Թ. Թորամանեան և հոկտեմբերի 4-ին Գրիգոր Չուբարեան: Ահա այս կազմով Ինստիտուտի գիտական կոլեգիան սկսում է իւր աշխատանքը և նրա այդ ուղղութեամբ կատարած գործն այսօր հրապարակի վրայ է:

«Բնագիրներ և Հետազօտութիւններ» շարքից մինչև այսօր, ընդամենը մի տարուայ ընթացքում, հրատարակուած է չորս գիրք:

1. Գիրք Ա. – Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին ✞ Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, XXXIV+96:

2. Գիրք Բ. – Հայ-Ռուս Օրիենտացիայի ծագման խնդիրը. պատմական-քննադատական ուսումնասիրութիւն Աշոտ Յովհաննիսեանի, Էջմիածին, 1921, 68+LII և 5 նկար:

3. Գիրք Գ. – Աբրահամու Խոստովանողի Վկայք Արևելից, թարգմանութիւնք յասորականէն. աշխատասիրութեամբ ✞ Գալուստ Տէր-Մկրտչեանի 1897–1900, Էջմիածին, 1921, XXII+248:

Այս գիրքը քսան տարուց ի վեր տպագրուած պատրաստ էր և չէր հրատարակում: Ինստիտուտը հրատարակեց Մեսրոպ եպիսկոպոսի յառաջաբանով:

4. Գիրք Դ. – Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր երկրորդ (1870–1900), Դ. Անանունի, Էջմիածին, 1922, եր. 248:

Ինչ վերաբերում է «Էջմիածնի Գիտական Ինստիտուտի Բանբեր»-ին, նրա հրատարակութիւնը 1921 թ. յունիսի կէսից զբաղեցրել է գիտական կոլեգիային և բազմաթիւ ժողովներում խորհրդակցութեան նիւթ դարձել: Վերջ ի վերջոյ ընկ. Խ. Սամուէլեանի կազմած «Բանբերի ծրագիրը» որոշ փոփոխութիւններով և լրացումներով ընդունուելով՝ առաջարկւում է Լուսժողկոմին ի հաստատութիւն 1921 թ. յուլիս ամսին: Ընկ. Լուսժողկոմի կողմից եղած առարկութիւնները հարցի ընթացքը փոքր ինչ կասեցնում են, մինչև որ 1921 թ. սեպտեմբերի վերջին կոլեգիայի կողմից յատուկ ներկայացուցիչներ (Դ. Անանուն և Ե. Տէր-Մինասեան) ծրագրի մէջ անհրաժեշտ փոփոխութիւնները մտցնելով՝ հաստատել են տալիս այն և իրաւունք ստանում անմիջապէս գործի ձեռնարկելու: Այսպիսով անհնար է լինում Ինստիտուտի պարբերական հանդիսի առաջին գիրքն հրատարակել որոշուած ժամանակին՝ 1921 թ. սեպտեմբերին. թէև նոր որոշում է լինում գէթ դեկտեմբերի սկզբին սկսել տպագրութիւնը և Ինստիտուտի հաստատութեան տարելիցին՝ 1922 թ. փետրուարի 5-ին, հրատարակել այն, սակայն տպարանական պայմանները հնարաւորութիւն չեն տալիս այդ որոշումն ևս իրագործելու: «Բանբեր»-ի շարուածքն հնարաւոր է լինում սկսել միայն 1922 թ. փետրուարի սկզբին և նրա միացեալ Ա. և Բ. գիրքը լոյս կ'տեսնի 1922 թ. յունիս ամսի վերջին Գիտնական Քարտուղար Ե. Տէր-Մինասեանի *խմբագրութեամբ:*

Ինստիտուտի երրորդ տեսակի աշխատանքները Գրական-գիտական զեկուցումների կազմակերպութիւնն էր: Դրա համար կազմւում է մանրամասն ծրագիր, նախատեսւում է տարուայ ընթացքում, մինչև 1922 յունիսի 15-ը, մօտ 20 զեկուցում, որոնցից սակայն կայանում են միայն վեցը, մասամբ այն պատճառով, որ Ինստիտուտի կազմից 1922-ի սկզբին հեռանում են նրա անդամներից և աշխատակիցներից ոմանք (Գարեգին եպիսկոպոս, Գր. Չուբարեան), մասամբ ևս այն պատճառով, որ Ինստիտուտի կեանքի մէջ տեղի են ունենում խոշոր փոփոխութիւններ. կրճատւում են նրա վարչական իրաւասութիւնները և այդ խնդիրները կլանում են բաւական մեծ ժամանակ և ուշադրութիւն:

Կայացած զեկուցումները հետևեալներն են.

1. 1921 թ. Հոկտեմբերի 23-ին Գարեգին եպիսկոպոսի զեկուցումը «Ազիբէկենք և նրանց շինարարական գործը Եղվարդում» նիւթի մասին: Զեկուցումը տպագրուած է «Բանբեր»-ի մէջ: Այս առաջին զեկուցմանը ներկայ էր Լուսժողկոմ ընկ. Ա. Յովհաննիսեան:

2. 1921 թ. Նոյեմբերի 14-ին Թ. Թօրամանեանի զեկուցումը «Նախաքրիստոնէական Հայաստանի ճարտարապետութիւնը» նիւթի մասին: Տպագրուած է «Բանբեր»-ում:

3. 1921 թ. Դեկտեմբերի 23-ին Գր. Չուբարեանի զեկուցումը՝ «Պետութեան անէացման գաղափարը» նիւթի մասին:

4. 1921 թ. Դեկտեմբերի 27-ին Դ. Անանունի զեկուցումը՝ «Բարձր դասը Հայաստանում և Ազերբայջանում» նիւթի մասին: Զեկուցումը տպագրուած է «Բանբեր»-ում:

5. 1922 թ. Յունուարի 31-ին Խ. Սամուէլեանի զեկուցումը «Սրրկութիւնն և ճորտատիրութիւնը հին հայոց իրաւունքում» նիւթի մասին:

6. 1922 թ. Փետրուարի 2-ին Ե. Տէր-Մինասեանի զեկուցումը՝ «Աբրահամ Խոստովանողի Վկայք Արևելիցը և նրա ասորական սկզբնատիպը» նիւթի մասին: Զեկուցումը տպագրուած է «Բանբեր»-ում: Զեկուցումներին ներկայ են եղել, բացի Ինստիտուտի անդամներից և աշխատակիցներից, նաև բաւական մեծ թուով կողմնակի հետաքրքրուողներ, որոնցից ոմանք մասնակցել են նոյն իսկ վիճաբանութիւններին:

Գիտական Ինստիտուտի կոլեգիան մտադիր էր նաև հանրամատչելի դասախօսութիւններ կազմակերպել, սակայն նրա այդ մտադրութիւնները գլուխ չեկան իրենից անկախ պատճառներով:

1921 թուի վերջին և 1922 թուի սկզբին տեղի է ունենում Ինստիտուտի վարչական իրաւասութիւնների կրճատումն, որի մասին ակնարկուեց վերևը: Մենք տեսանք որ Դեկրետով Ինստիտուտի իրաւասութեանն էին ենթարկւում մատենադարանը, թանգարանը, տպարանը, վանական հանրակացարանը, Հռիփսիմէի վանքը և Զուարթնոց աւերակները իրենց յարակից շէնքերով և գոյքով: Այժմ՝ Հ.Ս.Խ.Հ. կառավարութեան և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցութիւնների հետևանքով և Կառավարութեան վճռով 1922 թ. յունուարի 6-ին վերադարձւում են Էջմիածնի վանքի իրաւասութեանը թանգարանը և Հռիփսիմէի վանքը, վանական հանրակացարանը ենթարկւում է Հ.Ս.Խ.Հ. կառավարութեան Էջմիածնի ներկայացուցիչ Գ. Վարդանեանին, իսկ Զուարթնոց աւերակների կառավարութիւնը Լուսժողկոմ ընկ. Պ. Մակինցեանի *հրամանով 1922 թ. մարտի սկզբին ստանձնում է Հայաստանի Հնութեանց և Գեղարուեստից Յուշարձանների Պահպանութեան Կոմիտէն. այնպէս որ Ինստիտուտին ենթակայ մնում են առժամանակ միայն մատենադարանն ու տպարանը: Վերջին հաստատութիւնն ևս (տպարանը) Լուսժողկոմի հրամանով առնում է Ինստիտուտի իրաւասութիւնից և 1922 թ. մայիսի 23-ից ենթարկւում անմիջական կերպով Լուսժողկոմատին, այնպէս որ ներկայումս Ինստիտուտն ամփոփուած է միայն մատենադարանում և պէտք է աշխատի «Բնագիրների և Հետազօտութիւնների» և «Բանբեր»-ի հրատարակութեամբ, գիտական զեկուցումների կազմակերպութեամբ ու կանոնադրութեամբ իրեն վրայ դրուած միւս պարտականութիւնների կատարմամբ արդարացնել այն յոյսերը, որ դրուած են նրա վրայ:*

1922 թ. սկզբից նոր ընթացք է ստանում նաև Ինստիտուտի կանոնադրութեան խնդիրը, որ մինչև այն դեռ հաստատուած չէր: *Նոր Լուսժողկոմ ընկ.* Պ. Մակինցեանը *առաջարկում է Գիտական կոլեգիային անմիջապէս ներկայացնել իրեն նախկին կանոնադրութիւնը՝ ի նկատի ունենալով միայն Կուլտուր–Պատմական–Հնագիտական բաժինը: Այդպէս ներկայացրած կանոնադրութիւնը կրկին քննութեան է ենթարկում Գիտական Ինստիտուտի կոլեգիայում Լուսժողկոմի տեղակալ ընկ. Յակովբ Յովհաննիսեանի և կոլեգիայի անդամ ընկ. Գր. Եւանգուլեանի մասնակցութեամբ, վերջնական ձևակերպութիւն ստանում յատկապէս բաժինների վերաբերութեամբ Լուսժողկոմատում և հաստատւում Լուսժողկոմ ընկ. Պ. Մակինցեանի կողմից 1922 թ. մայիսի 11-ին:*

Հաստատուած կանոնադրութեան համաձայն Ինստիտուտն ստանում է նոյն թուից «Հայաստանի Գիտական Ինստիտուտ» անունը:

Ինստիտուտին ենթակայ հաստատութիւնները աշխատել են տարուայ ընթացքում բարեխիղճ կերպով կատարել իրենց վրայ դրուած պարտականութիւնները: Այսպես՝

Ա. Մատենադարանում վարիչ Սեն. Տէր-Յակոբեանի *ղեկավարութեամբ կատարուած աշխատանքները ունեցել են հետևեալ բնոյթը.*

1. Ձեռագրատունը *պետականացած միջոցին, ըստ նախկին 1917 թուին կազմուած և յետագայում շարունակուած ցուցակի, ունէր 1545 համար, որոնք Տաճկաստանից ստա-*

ցուած են եղել էջմիածնում որպէս աւանդ: Այս ցուցակում հայ ձեռագրերի հետ խառն համարակարգուած են պատառիկներ, արևելեան լեզուներով (պարսկ. արաբ.) ձեռագրեր, արխիւային նիւթեր և տպագրեր, իսկ նախկին էջմիածնի մատենադարանից մնում էին միայն երեք ձեռագրեր: Ձեռագրերի դահլիճի պահարանները ամբողջապէս լի էին բացի ձեռագրերից՝ արխիւային նիւթերով, տպագիր գրքերով և պարբերականներով: Տարուայ ընթացքում մեկուսացուել են ձեռագրատան հետ կապ չունեցող բոլոր նիւթերը. ամփոփուել են ձեռագրերը, որոնց շարքերից հանուել են տպագրերը, արևելեան լեզուներով ձեռագրերը և այլն: Դասաւորուել են ըստ մեծութեան և համարագրուել, աւելացնելով նախկին վարչութեան օրով ստացուած և ցուցակ չ'մուծած 28 ձեռագրերը և յետագայում Խաչիկ ծ. վ-ից վերցուածները: Այժմ ձեռագրատունը Թաւրիզից ուղարկած 83 և մատենադարանի ձեռք բերած ձեռագրերի հետ միասին՝ 1730 հայերէն, 57 կտոր արևելեան լեզուներով ձեռագրեր ունի և 410 կտոր պատառիկներ ու պահպանակներ և մի ժողովածու անտիպ գրական աշխատանքների:

2. Տպագրերի բաժինը *կազմուած է նախկին վանական և Գ. Հ. Ճեմարանի մատենադարանների միացումից, որ յիշուած հաստատութիւնների թողած վերջին ցուցակների և տեղեկագրերի համաձայն միացրած թուերով հետևեալ պատկերն ունի՝ հայերէն 11285 հատոր, ռուսերեն 11, 160 հ., ֆրանս. 2765 հ., գերմ. 2492 հ., անգլ. 250 հ., լատ.-յուն. 400 հ., այլ և այլ արևմտեան լեզուներով 200 հ., զանազան արևելեան լեզուներով 213 հ., ընդամենը 28765 հատոր բացի պարբերականներից: Պարբերականների կողմից հարուստ էր վանքի ժողովածուն, որ վերջին տեղեկագրի մէջ նշանակում է 258 հ. (հաշուից դուրս թողնելով, հաւանօրէն, պակասաւորները), ճեմարանը իւր պարբերականների համար ոչ մի ցուցակ չունէր: Հաշուից դուրս էին թողնուած մատենադարանի այլ և այլ մասերում ցրուած անգործածելի համարուած հին տպագրերը և կրկնօրինակները: Վանքի գրքերը զետեղուած էին ձեռագրատան և տպագրերի դահլիճներում, իսկ ճեմարանի մատենադարանը՝ շատ անխնամ, մատենադարանի արևմտեան դահլիճում՝ պահարանների մէջ և յատակների վրայ կուտակուած: Գրքերից կային բազմաթիւ պակաս համարներ, յատկապէս ճեմարանի բաժնից: Յայտարարութիւնների և այլ հնարաւոր միջոցների դիմելով միայն Վաղարշապատից յետ ստացուեց մօտ 300 կտոր գիրք:*

Ինստիտուտի գոյութեան առաջին տարուայ ընթացքում ամենայն հնարաւոր աշխատանք գործ դրուեց մատենադարանի պահպանութեան, կարգաւորման և զարգացման համար: Տպագրերի դահլիճի պահարանների անգործնականութեան համար և այլ յարգելի պատճառներով՝ տպագրերի բաժանմունքը մի քանի անգամ տեղափոխութիւնների է ենթարկուել, մինչև վերջապէս արևելեան երկու կից դահլիճները տպագրերի համար գրասրահների վերածուեցին, մատենադարանի վերին յարկի մի սենեակը արխիւի և միջին յարկի սենեակներից մինը կրկնօրինակների, իսկ միւսում անշարժ նոր դարակներ շինել տալով մամուլի բաժնի վերածուեց:

Երկու մատենադարանների գրքերը միատեղելուց յետոյ, սկսուեցին միաձուլումի աշխատանքները. այս առիթով միևնոյն գրքերի հատորները, որոնք սովորաբար տարբեր համարների տակ էին զետեղուած, ինչպէս և նոյնանուն գրքերը միատեղուեցին: Նոյն գրքի երկու կամ երեք օրինակից աւելի համարները մեկուսացուեցին որպէս կրկնօրինակներ և ապագայ առձեռն մատենադարանի համար: Հայ. հին տպագրերը (1512-1799) առօրեայ գործածութիւնից և ձեռնահարութիւնից խնայելու համար առանձնացուեցին: Կարտոգրաֆիական-գեղարուեստական բաժնի համար միատեղուում են բոլոր քարտէզները, ատլասները, ալբոմները և այլ համապատասխան նիւթերը: Ճեմարանից մնացած դասագրքերի կոյտերը դասաւորուեցին, ցուցակագրուեցան, որոնցից այժմէական գործածութեան համար պիտանիները (1459 կտոր) Լուսժողկոմի կարգադրութեամբ յանձնուեց Գալուստբաժնին:

3. Մամուլի բաժին *կազմակերպելու համար՝ ձեռագրատանը, տպագրերի բաժնում, մատենադարանի ձեղնայարկում, ճեմարանի շէնքում և այլուր զետեղուած կամ ցրուած բոլոր պարբերականները հաւաքուեցին, դասաւորուեցին և ցուցակագրուեցին, անգամ միայն մի հատ համար ներկայացնող թերթերը:*

Տարուայ ընթացքում կազմուել են աւելի քան 500 գրքեր, պարբերականներ և բրոշիւրներ:

Մատենադարանը Ինստիտուտի առաջին տարուայ ընթացքում զանազան հիմնարկութիւններից և անձերից ստացել է 1500 անուն գիրք, թերթ, բրոշիւր, ըստ մեծի մասին հայերէն: Կորուստ ունեցել է 9 գիրք (քաղաքացիական կռիւների պատճառով):

Հ.Գ. Ինստիտուտի նպատակներին համապատասխանող կատարելութեան հասնելու համար միաժամանակ մատենադարանում կատարւում են մասնագիտական աշխատանքներ՝ լիակատար հայագիտական և առաջաւոր ասիագիտական գրականութիւնը ամբողջացնելու համար:

Մատենադարանից պարբերաբար օգտուողների թիւը տարուայ ընթացքում եղել է 136. օգտուելու դիւրութիւններ ընձեռուել են նաև մայրաքաղաքում ապրող գիտնականներին:

Մատենադարանն այցելել են համարեա առանց բացառութեան Էջմիածին եկող բոլոր հայաստանցի թէ օտարերկրացի ճանապարհորդները, էքսկուրսանտները, համագումարների պատգամաւորները ևն, ևն., որոնք ստացել են համապատասխան բացատրութիւններ:

4. Արխիւի բաժնում կատարուած է բաւական մեծ աշխատանք վարիչ Գիւտ ծ. վարդապետ Տէր-Ղազարեանի ձեռքով: Չնայելով որ մի տարուայ ընթացքում արխիւը երկու անգամ ամբողջութեամբ տեղափոխուել է տեղից տեղ, այնուամենայնիւ հնարաւոր է եղել վերջացնել Արխիւի նախնական աշխատանքները՝ բոլոր թղթերի և դոկումենտների ժամանակագրական կարգով դասաւորումը. բացի այդ՝ Կոլեգիայի հաւանութեամբ մշակուած է արխիւի ցուցակագրութեան որոշ ձև թերթիկներով և սկսուած է այդ ցուցակագրութիւնը: Դժբախտաբար ցուցակագրութիւնը առ ժամանակ կանգ է առել վարիչ Գիւտ ծ. վարդապետի պաշտօնից հրաժարուելու պատճառով (6 յունուարի 1922 թ.):

Բ. Թանգարանում կատարուած աշխատանքի մասին խօսելով՝ ամենից առաջ պէտք է յիշենք, որ թանգարանի վարիչ Գարեգին եպիսկոպոս Յովսեփեանի *ղեկավարութեամբ և նրա օգնական նկարիչ Տարագրոսի օժանդակութեամբ կազմուել է նոր պատկերասրահ՝ պատկերների ընտրութեամբ և ոմանց նորոգութեամբ, որ ներկայումս զետեղուած է մատենադարանի մեծ դահլիճում: Մեծ ջանք գործ դրուեց թանգարանի վարիչի կողմից մասնակցելու 1921 թ. Երևանի նկարչական ցուցահանդէսին Էջմիածնի պատկերներով, բայց այդ աշխատանքները՝ գլխաւորապէս տրանսպորտի միջոցների բացակայութեան պատճառով ապարդիւն անցան: Նոր գնումներ, գիտական արշաւախմբի կազմակերպումն և ստեղծագործական այնպիսի աշխատանքներ, ինչպէս ծրագրել էր թանգարանի վարիչը և հաւանութիւն ստացել կոլեգիայից, հնարաւոր չէ եղել կատարել, ներկայացրած նախահաշուի չ'հաստատուելու պատճառով:*

Թանգարանը շաբաթը 3 անգամ բաց է եղել այցելուների համար. այցելել են 3455 հոգի (Ժողովրդ. Կոմիսարներ, աշակերտ-աշակերտուհիներ, սկաուտներ, զինուորներ, Վաղարշապատի Գաւառի պատգամաւորներ, Երևանի II աստիճ. դպրոցի աշակերտ-աշակերտուհիներ իրենց ուսուցիչների ղեկավարութեամբ և այլն և այլն) և բոլորին համապատասխան բացատրութիւններ է տրուել թանգարանի վարիչի կամ նրա օգնականի կողմից:

Գ. Նշանակելի է տպարանում կատարուած խոշոր աշխատանքը, վարիչ Խ. Սամուէլեանի *ղեկավարութեամբ, եթէ մանաւանդ ի նկատի ունենանք այն աննպաստ պայմանները, որոնց մէջ գտնուել է տպարանը. օրինակ միշտ կարիք է զգացուել մանր գործիքների և մեքենաների մասերի նորոգութեան, որոնք շատ անգամ չեն իրագործուել. պակասութիւն է զգացուել զանազան մանր գործիքների և անհրաժեշտ նիւթեղէնի, ինչպէս ջիֆտ, դանակ, բիզ, տողաշար, բենզին, նաւթ, իւղ, շպագատ, թել, սոսինձ,*

կրախմալ, քաթան, ասեղ, թել և այլն: Այդ պակասութիւնների և այլ նման դեֆեկտների պատճառով տպագրական գործերը դանդաղել են, երբեմն մինչև իսկ կանգ առել: Չի եղել նաև էլէկտրական կամ շարժիչ ոյժ և մեքենաները գործի են դրուել մարդկային ոյժով: Բացի այդ տպարանը Ինստիտուտն ստանձնել է խիստ անխնամ և թափթփուած վիճակում, նախորդ տարիներից մնացած ահագին քանակութեամբ իրար խառնուած և թափուած շարուածքներով: Չէ աշխատել նաև ձուլարանը:

Այնուամենայնիւ սոյն տեղեկագրի շրջանում շարուել են և տպագրուել.

I. Ակցիդենտային գործեր – բլանկներ, ֆակտուրաներ, անդորրագրեր, հաշիւներ, զանազան ձևեր, կոչեր, յայտարարութիւններ 218,000 – թերթ,

II. Լրագիրներ . . . 22,830 »

III. Գրքեր և բրոշիւրներ.

1. Մ. Աբեղեանի՝ հայոց լեզուի ուղղագրութեան ռէֆորմի մասին – 1 1/2 մամուլ 300 օրինակ.

2. Նախադպրոցական շրջանի հիմնարկութիւնները – 1 մամուլ . . . 300 »

3. Մայրենի լեզուի օրինակելի ծրագիր . . . 1 մամուլ . . . 1000 »

4. «Շամս» Եզիդերէն այբբենարան – 3 1/2 մամուլ . . . 1200 »

5. «Շապուհ Բագրատունու պատմութիւն» – 6 մամուլ . . . 500 »

6. Աշ. Յովհաննիսեանի–Հայ–Ռուս Օրիենտացիայի ծագման խնդիրը. 7 մամուլ և 5 պատկեր. 500 »

7. Աբրահամ Խոստովանողի Վկայք Արևելից 2 մամուլ. 500 »

8. Դեկրետների և Հրամանների ժողովածու, պրակ I. 8 մամուլ 1500 »

9. » » » II. 7 մամուլ. 150 »

10. » » հաւաքածուներ №№ 1–9, 4 1/2 մամ. բոլորը 13, 500 »

11. » » հաւաքածու Ներքին Գործոց Ժողկոմատի 2 մամուլ 500 »

12. » » Աշխատանքի ապահովութեան վերաբերյալ 3 մամուլ 1500 »

13. Ծրագիր ընդհանուր պատմութեան 1 մամուլ 1000 »

14. » Արուեստի – 2 մամուլ 1000 »

15. Օրացոյց–Էջմիածնի 1922 թ. – 7 մամուլ 1500 »

16. Դասընկեր Բ. տարի . . . . . 3 1/2 մամուլ 6, 750 »

17. Դասընկեր Գ. տարի. 9 1/2 մամ. 3,800 »

18. Ծրագիր աշխարհագիտութեան 3 5/4 մամուլ . . . . . 1000 »

19. » մաթեմատիկայի. 3 1/4 մամուլ . . . . . 1000 »

20. Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրութիւնը 1 մամուլ . . . . . 1500 »

21. Դ. Անանունի, Ռուսահայերի հասարակական զարգացումը բ. հատ. 15 1/2 մամուլ . . . . 600 »

22. Բանբեր Էջմ. Գիտ. Ինստիտուտի. ա. և բ. գիրք. 23 մամուլ 300 »

Այս բոլոր գրքերն ու բրոշիւրները ծալուել և կազմուել են տպարանի կազմատանը. բացի այդ՝ կարուել և կազմուել են զանազան մատեաններ, բլոկնոտներ, թղթապանակներ, Գիտական Ինստիտուտի մատենադարանի գրքեր և այլն՝ մօտ 2100 օրինակ:

Ինստիտուտի Կոմիսար և կոլեգիայի Նախագահ Կ. Մելիք-Օհանջանեանը 1921 թ. օգոստոսի 15-ին արձակուրդով հեռացել է Էջմիածնից և նրան փոխարինել է իբրև ժամանակաւոր կոմիսար մի ամսով ընկ. Գագիկ Պարզեանը, իսկ իբրև կոլեգիայի ժամանակաւոր Նախագահ մինչև ընկ. Մելիք-Օհանջանեանի վերադարձը՝ Խաչիկ Սամուէլեան: Ընկ. Կ. Մելիք-Օհանջանեանը վերադարձել է իր պաշտօնին նոյեմբերի կէսերին, բայց պաշտօնավարել է կարճ ժամանակ, մինչև 1921 թ. դեկտեմբերի 22-ը: Այդ թուին նա հրաժարուել է պաշտօնից և հեռացել Էջմիածնից, իսկ ժամանակաւոր նախագահի պարտականութիւնը կրկին ստանձնել է Խ. Սամուէլեան մինչև 1922 թ. յունուարի 5-ը: 1922 թ.

յունուարի 6-ից Լուսժողկոմ ընկ. Պ. Մակինցեանի հրամանով Ինստիտուտի Փոխնախագահ է կարգուել ընկ. Սեն. Տէր-Յակոբեան, *որ և այդ պաշտօնը վարում է մինչև այսօր:*

Ինստիտուտի Գիտական Կոլեգիան մինչև այժմ ունեցել է 32 նիստ, որոնցից առաջին անդրանիկ նիստը նախկին Լուսժողկոմ ընկ. Աշոտ Յովհաննիսեանի նախագահութեամբ, 2 նիստ Լևոն Սարգսեանի, 1 նիստ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ներկայացուցիչ Ն. Աղբալեանի, 11 նիստ Կ. Մելիք-Օհանջանեանի, 8 նիստ Խ. Սամուէլեանի և 9 նիստ Սեն. Տէր-Յակոբեանի նախագահութեամբ:

Կցում ենք ստորև «Հայաստանի Գիտական Ինստիտուտի Կանոնադրութիւնը», հաստատուած 1922 թ. Մայիսի 11-ին:

Գիտնական Քարտուղար՝
Ե. Տէր Մինասեան

6 յունիս 1922 թ.
Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Ինստիտուտի նպատակը եւ զբաղմունքները

§ 1. Հայաստանի Գիտական Ինստիտուտը Պետական բարձրագոյն կենտրոնական հիմնարկութիւն է և ենթարկւում է անմիջապէս Հ.Ս.Խ.Հ. Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի Ակադեմական Կենտրոնին:

§ 2. Հայաստանի Գիտական Ինստիտուտի նպատակն է գիտական հիմքերի վրայ դնել Հայաստանի Կուլտուր-պատմական ուսումնասիրութիւնը:

§ 3. Հայաստանի Գիտական Ինստիտուտի զբաղմունքի առարկաներն են՝

ա. Հաւաքումն, ցուցակագրութիւն և ուսումնասիրութիւն Հայաստանի ազգագրութեան, գեղարուեստի և հնութեանց այն բոլոր նիւթերի եւ յուշարձանների, որոնք ունին գիտական-գեղարուեստական նշանակութիւն կամ կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործութեան:

բ. Ձեռագիրների ցուցակների, բնագիրների, այլ և հայագիտութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ գիտական ուսումնասիրութիւնների հրատարակութիւն:

գ. Ուսումնասիրութիւն Հայաստանի արդի մշակոյթի, տնտեսական, սոցիալական պայմանների, նոր գրականութեան և այլն:

դ. Բառարանների կազմութիւն և հրատարակութիւն:

ե. Մրցանակների հաստատութիւն և բաշխումն, և

զ. Կազմակերպութիւն գիտական արշաւախմբերի երկրի զանազան կողմերը:

§ 4. Ինստիտուտը ունի հետևեալ բաժանմունքները.

ա. Հնագիտական, ազգագրական և գեղարուեստի պատմութեան.

բ. Լեզուագիտական և ցեղաբանական.

Ցեղական տիպերի, բարբառների և լեզուների ծագումը, բարբառների և լեզուների պատմութիւն և համեմատական քերականութիւն.

գ. Բանասիրական.

Ժողովրդական բանահիւսութիւն և ժողովրդական գրականութիւնների

համեմատական ուսումնասիրութիւն.

Գրականութիւն և գրականութեան պատմութիւն.

դ. Պատմական-հասարակագիտական.

Հասարակական կազմ և տնտեսական կեանք:

Պետական–իրաւական զարգացում:

Հասարակական մտայնութիւն:

§ 5. Հայաստանի Գիտական Ինստիտուտը յարաբերութիւն է պահպանում Հայաստանի և արտասահմանի գիտական հիմնարկութիւնների և ընկերութիւնների հետ, ստանում է նրանց հրատարակութիւնները և փոխարէնը ուղարկում իւրը:

§ 6. Ինստիտուտը հրատարակում է իւր անդամների և աշխատակիցների գրուածքները, որոնցից մանր երկասիրութիւններն ու գիտական յօդուածները տպագրում են Ինստիտուտի պարբերական հանդիսում «Հայաստանի Գիտական Ինստիտուտի Բանբեր» ընդհանուր վերնագրի ներքոյ, իսկ մեծ աշխատութիւններն ու հրատարակութիւններն առանձին գրքերով՝ «Բնագիրներ և Հետազօտութիւններ» վերնագրով:

Բ. Ինստիտուտի անձնական կազմը

§ 7. Ինստիտուտի անձնական կազմը հետևեալն է. ա. Նախագահ, բ. Գիտնական Քարտուղար և գ. Անդամներ, որոնք և կազմում են Ինստիտուտի Խորհուրդը:

§ 8. Խորհրդի իրաւունքն է ընտրութեան միջոցով իւր կազմը լրացնել Հայաստանում ապրող գիտական պատրաստութիւն և արդիւնք ունեցող անձնաւորութիւններով, որոնց պաշտօնի մէջ հաստատում է Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի Ակադեմիական կենտրոնը:

§ 9. Բացի իսկական անդամներից՝ Ինստիտուտը կարող է ունենալ նաև պատուաւոր և թղթակից անդամներ:

Ծանօթ. ա. – Պատուաւոր անդամ կարող են ընտրուել յայտնի գիտնականներ:

Ծանօթ. բ. – Թղթակից անդամ կարող են ընտրուել արտասահմանում ապրող այն գիտնականները, որոնք իրենց գործունէութեամբ, գրուածքներով և թղթակցութիւններով կարող են օգտակար լինել Հայաստանի Գիտական Ինստիտուտի նպատակների իրագործման:

§ 10. Ինստիտուտը կարող է ունենալ նաև աշխատակիցներ, որոնք Ինստիտուտի ցուցմունքով կամ հաւանութեամբ զբաղւում են նրա նպատակներին համապատասխանող գիտական աշխատանքով:

§ 11. Ինստիտուտի նախագահը նրա անմիջական ղեկավարն է գիտական, վարչական և տնտեսական տեսակէտներից: Նա է նախագահում Խորհրդի և Ինստիտուտի Վարչութեան նիստերում և հսկում Ինստիտուտի կանոնադրութեան անթերի գործադրութեան վրայ:

§ 12. Ինստիտուտի նախագահը ընտրւում է Խորհրդի կողմից և պաշտօնի մէջ հաստատւում Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարի հրամանով: Հիւանդութեան կամ բացակայութեան դէպքում նրան փոխարինում է Գիտնական Քարտուղարը:

§ 13. Գիտնական Քարտուղարը ընտրւում է Խորհրդի կողմից և պաշտօնի մէջ հաստատւում Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարի հրամանով: Հիւանդութեան կամ բացակայութեան դէպքում նրան փոխարինում է Ինստիտուտի անդամներից մէկը՝ ընտրութեամբ:

§ 14. Գիտնական Քարտուղարի պարտականութիւնն է.

ա. Գրագրութիւն վարել գիտական հաստատութիւնների, գիտնականների և Ինստիտուտի անդամների հետ:

բ. Կազմել Խորհրդի արձանագրությունները:

գ. Զեկուցանել բոլոր գործերը և տեղեկություն տալ ստացուած գիտական գրքերի և հրատարակությունների մասին:

դ. Խմբագրել Ինստիտուտի պարբերական հանդէսը և հսկել Ինստիտուտի գիտական հրատարակությունների տպագրության կանոնաւորության և վայելչության վրայ:

ե. Ստորագրել Ինստիտուտի անունից գրուած բոլոր վկայականներն ու թղթերը և պահել Ինստիտուտի կնիքը:

§ 15. Ինստիտուտի Մատենադարանի վարիչը ընտրում է Ինստիտուտի անդամներից:

Գ. Գիտական Ինստիտուտի Վարչությունը

§ 16. Հայաստանի Գիտական Ինստիտուտն ունի իւր Վարչությունը, որին անդամակցում են Նախագահը, Գիտնական Քարտուղարը և Ինստիտուտի անդամներից մէկը Խորհրդի ընտրությամբ:

§ 17. Վարչության պարտականությունն է՝ հսկել Ինստիտուտին ենթակայ հաստատությունների կանոնաւոր և արդիւնաւէտ գործունէության, գոյքերի ապահով պահպանության, շէնքերի կարգաւորության և ելևմուտքի կանոնաւորության վրայ, համապատասխան վարիչների առաջարկությամբ հրաւիրել և արձակել պաշտօնեաներին, կազմել տարեկան տեղեկագիր Ինստիտուտի գործունէության մասին և ներկայացնել Հ.Ս.Խ.Հ. Լուս. Ժող. Կոմիսարիատի Ակադեմիական կենտրոնին:

Դ. Գիտական Ինստիտուտի նիստերը

§ 18. Հայաստանի Գիտական Ինստիտուտն ունի իւր նիստերն, որոնք լինում են հանդիսաւոր, սովորական և արտակարգ:

§ 19. Հանդիսաւոր դռնբաց նիստ տեղի է ունենում Ինստիտուտի հիմնարկության օրը փետրուարի 5-ին կամ գիտական–կուլտուրական նշանաւոր յիշատակումների առթիւ:

§ 20. Սովորական նիստերը լինում են դռնփակ: Այդպիսի նիստերում տրւում են գիտական հարցերի և աշխատանքների մասին զեկուցումներ և տեղեկություններ, կատարւում են ընտրություններն և բաշխւում մրցանակները:

§ 21. Արտակարգ դռնփակ նիստ հրաւիրում է կարևորության դէպքում նախագահը ըստ իւր հայեցողության կամ Ինստիտուտի երկու անդամների գրաւոր պահանջով:

Ե. Ինստիտուտի իրաւասությունն ու միջոցները

§ 22. Հայաստանի Գիտական Ինստիտուտի լիակատար իրաւասությանն է ենթարկւում Էջմիածնի պետականացրած հաստատություններից Մատենադարանը:

§ 23. Հայաստանի Գիտական Ինստիտուտի բոլոր կարիքները հոգում է Պետական Գանձարանը հաստատուած նախահաշուի համաձայն, բայց Ինստիտուտը կարող է ունենալ նաև կողմնակի եկամուտներ կտակներից, նուէրներից և այլն, որոնք գործադրւում են համաձայն նուիրատուի ցանկության:

§ 24. Հայաստանի Գիտական Ինստիտուտը, ինչպէս և նրա բոլոր հաստատությունները, ունին իրենց յատուկ կնիքը: